

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),
ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Այսօր երբ մեր եկեղեցիներու զանգերը հաղթական կհնչեն, ավետելու համար աշխարհին, հրաշափառ հարությունը Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի, Մենք բերկրյալ սրտով կու գանք Ձեզի, բերելու Մեր սրտաբուխ շնորհավորանքը և ամենաբարի մաղթանքները, առատ օրհնություններով հանդերձ աստվածակառույց սուրբ Էջմիածնեն:

Թող կենարար շնորհները հարուցյալ Փրկչին՝ անշարժ ու ծաղկյալ պահեն մեր առաքելական սուրբ եկեղեցին և համայն ժողովուրդը հայոց որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Թող Տերը անսասան պահպանեն ձեր պատմական Աթոռը իր քրիստոնեական միաբանությամբ ու ժողովուրդով, մեր մայր եկեղեցվո սիրո և եղբայրության նվիրական ընտանիքին մեջ մեկ ու անբաժան, և Ձերդ Սրբազնության պարգևե բազում տարիներ քաջառողջությամբ ու խաղաղությամբ:

Թող լույսը սուրբ Հարության լուսավորե նաև մարդկային կյանքի ուղին և առաջնորդե պատմությունը դեպի նավահանգիստը արդարության և խաղաղության:

Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ: Ամէն:

Սիրո ողջունիվ՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչությանը (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալությանը (Լիսաբոն), Աբգարյան Ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

*
* *

Շնորհազարդ Եղբայր ի Քրիստոս,

Աստվածորդվույն ս. Հարության հրաշափառ տոնին առթիվ կփութանք Ձեր Վեհափառ եղբայրության ներկայացնել Մեր սրտալից շնորհավորությունները ու ամենաջերմ զգացումները:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ ամենաբարին Աստված ս. Հարության շունչով զորացնե Ձերդ սիրեցյալ եղբայրությունը և պարգևե Ձեզի մշտատև առողջություն և գործոց բարյաց հաջողություն:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ, աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

*
* *

Մեր Տիրոջ ս. Հարության ուրախ առթիվ Ձերդ Սրբության կներկայացնեմ իմ, միաբանության և ժողովրդին սրտագին շնորհավորությունները՝ ցան-

կանալով Ձերդ Սրբության քաջառողջություն և երջանկություն, բարգավաճություն՝ Մայր Աթոռին:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

*
* *

Սրտանց կշնորհավորենք Վեհափառությանդ ս. Ջատկի հրաշափառ տոնին առիթով և կմաղթենք Ձեզի երկար կյանք, երջանիկ օրեր, և առավել արդյունավորություն Ձեր շինարար գործերուն:

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ

ՍՏԱՄԲՈՒԼ

*
* *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: